
**ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ¹**

ԲՈՍՏԱՆՁՅԱՆ Վ. Բ.

Հարկարյուջետային համակարգի գլխավոր օղակը պետական բյուջեն է, որը կարևոր դեր ունի յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման, գոյություն ունեցող խնդիրների լուծման և հասարակական առաջընթացի ապահովման գործում: Այն նաև տնտեսության պետական կարգավորման կարևոր լծակն է և արտացոլում է պետության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայությունները: Օգտագործելով բյուջետային համակարգում կենտրոնացված ֆինանսական ռեսուրսները՝ պետությունը մասնակցում է կարևոր նշանակություն ունեցող ներդրումային, կառուցվածքային, տեխնոլոգիական ծրագրերի իրականացմանը՝ լրիվ կամ մասնակի ֆինանսավորման, երաշխիքների տրամադրման և ֆինանսական աջակցության այլ ձևերի կիրառմամբ:

Հարկ է նշել, որ երկրի բյուջետային համակարգի կարևորագույն խնդիրը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթների իրականացումն է և դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացումը: Յուրաքանչյուր երկրի բյուջետային համակարգ ունի իր առանձնահատկությունները և կախված է պետության կառուցվածքից, պետական կառավարման համակարգից, տնտեսության զարգացման մակարդակից և մի շարք այլ գործոններից: Անկախ գոյություն ունեցող յուրահատկություններից՝ բյուջետային համակարգը պետք է հիմնված լինի արդյունավետության, կայունության և սոցիալական արդարության սկզբունքների վրա: Եկամուտների աղբյուրների ընտրության, դրանց չափերի հիմնավորման հարցերի կարևորության հետ խիստ կարևոր է նաև բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործման հարցը: Արդի համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող գործընթացները վկայում են տնտեսության կարգավորման հարցում պետության դերի բարձրացման մասին, որը նրան առաջադրում է նոր գործառույթներ: Հատկապես շուկայական հարաբերություններին անցման շրջանում պետության դերը և գործունեության շրջանակները միարժեքորեն մեծանում են:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ գիտական թեմայի շրջանակում:

Բյուջետային ծախսերի վերաբերյալ մասնագետների ներկայացրած սահմանումների² համաձայն՝ դրանք դիտարկվում են որպես ֆինանսական հարաբերությունների մի մաս, որը կապված է պետության կենտրոնացված դրամական ֆոնդերի օգտագործման, կառավարման մարմինների կողմից սահմանադրական նորմերի պահպանման, բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում ֆինանսական ռեսուրսների ձևավորման, կենտրոնացված ֆոնդերի վերաբաշխման և պետական այլ գործառնությունների իրականացման հետ:

Սոցիալ-տնտեսական զարգացման համար, անշուշտ, խիստ կարևոր է հարկաբյուջետային քաղաքականության ռազմավարության մշակման և իրականացման հարցը: Դրա համար, նախ և առաջ, պետք է երկրում ձևավորել այնպիսի հարկաբյուջետային համակարգ, որը մեծապես կնպաստի ձեռնարկատիրական ակտիվության բարձրացմանը, ներդրումային բարենպաստ միջավայրի ձևավորմանը, բնակչության սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը և տնտեսական այլ հիմնախնդիրների լուծմանը: Ընդ որում, անկախ պետության և հարկատուների տնտեսական հետաքրքրությունների տարբերություններից, զարգացման ընդհանուր ռազմավարությունը պետք է լինի մեկը՝ ստեղծել կայուն տնտեսական բազիս ամբողջ երկրում: Միայն նման մոտեցման պարագայում, մեր համոզմամբ, հնարավոր կլինի ունենալ իրական ակնկալիքներ սոցիալ-տնտեսական զարգացման առումով:

Բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացումն ակնհայտորեն հարկաբյուջետային քաղաքականության կարևոր նպատակներից է, որը նախ և առաջ կապված է բյուջետային գործընթացի կատարելագործման հետ: Ըստ էության, պետք է առանձնացնել այն հիմնական ուղղությունները, որոնք կազմելու են բյուջետային բարեփոխումների առանցքը: Դրանցից մեկը, մասնավորապես, պետք է ներառի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ստանձնած պարտավորությունների ամբողջական ֆինանսավորումն ապահովելու ուղղությամբ իրականացվող միջոցառումների համալիրը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հետևողական աշխատանքներ իրականացնել պետական գործառնությունների հստակեցման, դրանց անհրաժեշտության հիմնավորման և, որ ամենակարևորն է, այդ գործառնությունների կատարման համար արդյունավետ մոտեցումների մշակման ուղղությամբ: Նման խնդրի

² Родионова В., Вавилов Ю., Гончаренко Л. и др. Финансы, М., 1995, с. 245; Региональные финансы и кредит. Под ред. Л. Сергеева, М., 1998, с. 100; Бабиц А., Павлова Л. Государственные и муниципальные финансы, М., 1999, с. 115, Финансы и кредит. Под ред. А. Козака, Екатеринбург, 1994, с. 203, Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ., Հարկաբյուջետային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2004, էջ 84:

լուծումը հատկապես կարևորվում է անցումային տնտեսության պայմաններում, քանի որ նախկին համակարգից ժառանգած մի շարք խնդիրներ դադարում են պետության հետաքրքրության առարկա մնալուց: Ավելին, առաջանում են նոր խնդիրներ, որոնց լուծումը ենթադրում է պետության մասնակցություն կամ անմիջական ղեկավարում: Այս առումով, կարծում ենք, որ բյուջետային ծախսերն անհրաժեշտ է ենթարկել մանրակրկիտ փորձաքննության՝ թողնելով միայն այն ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են հասարակության և պետության բնականոն գործունեության ապահովման հետ:

Բյուջետային համակարգի արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություններից է բյուջեի մշակման և կատարման գործընթացում ծրագրանպատակային սկզբունքների կիրառումը: Այս առումով, անհրաժեշտ է մշակել և ներդնել բյուջետային միջոցների բաշխման համակարգ՝ ըստ տնտեսական և սոցիալական կարևոր հիմնախնդիրների լուծմանն ուղղված ճյուղային, ոլորտային և գերատեսչական ծրագրերի: Նման խնդրի լուծումը պահանջում է նախատեսվող ծրագրերի իրագործման արդյունավետության գնահատման մեխանիզմներ, որ թույլ կտան հստակորեն կողմնորոշվել բյուջետային միջոցների բաշխումը պլանավորելու հարցում:

Ակնհայտորեն, բյուջետային համակարգի բարեփոխումների կարևոր ուղղություններից պետք է լինեն միջբյուջետային հարաբերությունների արդյունավետ համակարգի ձևավորումը և, մասնավորապես, բյուջետային համակարգի բոլոր մակարդակներում իրավասությունների և պատասխանատվության, պարտավորությունների և ռեսուրսների միջև հաշվեկշռվածության ապահովումը: Տվյալ ոլորտում հիմնական խնդիրը ֆինանսական պարտավորությունների հիմնավորված ապակենտրոնացումն է և բյուջետային մուտքերի ամրագրումը համապատասխան մակարդակի բյուջեներին՝ պահպանելով ստանձնած ծախսային պարտավորությունների մակարդակներին վերապահված իրավասության համարժեքությունը: Այս խնդիրը հատկապես կարևորվում է Հայաստանի Հանրապետության համար, որտեղ համայնքների բյուջեների եկամտային բազան, որպես կանոն, չափազանց փոքր է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների պատշաճ իրականացումը ֆինանսավորելու համար: Միջբյուջետային հարաբերությունների բնույթը պետք է նպաստի տարածաշրջաններում տնտեսական կյանքի խթանմանը, քաղաքացիների համար պետք է ապահովի բյուջետային ծառայությունների հա-սանելիությունը և տեղական նշանակության առաջնահերթ խնդիրների լուծումը: Այս համատեքստում լուրջ խնդիր է դառնում ֆինանսական համահարթեցման այնպիսի մեխանիզմի ձևավորումը, որն իրապես հնարավորություն կընձեռի զարգացման տարբեր ներուժ և հնարավոր-

րություններ ունեցող համայնքներին՝ ապահովելու համեմատաբար հավասար հնարավորություններ:

Պետական ծախսերի ծավալի և կառուցվածքի որոշումը պետական քաղաքականության կարևոր խնդիրներից է, որից անմիջականորեն կախված է պետության գործառույթների պատշաճ իրականացումը: Բյուջետային դեֆիցիտի կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականությունը կախված է ինչպես երկարաժամկետ զարգացման ռազմավարության ընտրությունից, այնպես էլ արտաքին և ներքին տնտեսական գործոններից: Բյուջետային ծախսերի կառուցվածքը և ուղղությունները, ըստ էության, արտացոլում են տնտեսական քաղաքականության գերակայությունները և բխում են պետության որդեգրած քաղաքական և տնտեսական զարգացման ռազմավարությունից: Հարկ է նշել, որ տարբեր երկրներ նախընտրում են բյուջեի տարբեր կառուցվածքներ: Դա, ի թիվս այլ գործոնների, մեծապես պայմանավորված է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և աշխարհաքաղաքական առանձնահատկություններով: Հատկապես ռազմաքաղաքական բարդ իրավիճակներում գտնվող պետություններում, որպես կանոն, ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում պաշտպանության ոլորտին: Միաժամանակ, սոցիալական ընդգծված քաղաքականություն իրականացնող երկրներում մեծ տեսակարար կշիռ են կազմում սոցիալական աջակցությանն ուղղվող բյուջետային ծախսերը: Այս առումով, ակնհայտ է, որ բյուջեի ծախսային մասի կառուցվածքն արտացոլում է տվյալ երկրի սոցիալ-տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները և կախված է պետական քաղաքականության գերակայություններից: Ըստ էության, հաստատված բյուջեն կարելի է դիտարկել որպես բյուջետային սահմանափակումների պայմաններում պետության գործառույթների առավելագույնս արդյունավետ իրականացման խնդրի լուծում: Գոյություն ունեն նաև որոշակի ծախսային պարտավորություններ, որոնք, թեկուզև նվազագույն ծավալով, պետք է իրականացվեն ապահովելու պետության բնականոն գործունեությունը:

Ընդհանուր առմամբ, բյուջետային գործընթացի հիմքում ընկած է լինում տնտեսական քաղաքականությամբ պայմանավորված հարաբերությունների այն ամբողջությունը, որը հստակ ցույց է տալիս հասարակության քաղաքական կառուցվածքի և երկրի տնտեսության միջև գոյություն ունեցող կապը: Ըստ էության, պետական բյուջեի ծախսային մասի ձևավորման հիմնական պայմանը բյուջետային սահմանափակումների պայմաններում պետության գործունեության օգտակարության առավելագույնս ապահովումն է, որը, ի թիվս այլ գործոնների, կախված է նաև տվյալ երկրի առանձնահատկություններից: Որպես կանոն, բյուջետային քաղաքականության հիմնական ուղղվածությունը գնահատելու համար ծախսերը

տարանջատվում են երկու հիմնական խմբերի: Առաջինն ընդգրկում է սոցիալական կողմնորոշում ունեցող ծախսերը՝ սոցիալական ապահովություն, առողջապահություն, կրթություն, գիտություն, մշակույթ և այլն, իսկ երկրորդը՝ պաշտպանության, պետական կառավարման, իրավապահ համակարգի պահպանման ծախսերը: Առաջին խմբում ընդգրկվող ծախսերի մեծ տեսակարար կշիռը վկայում է բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված ընդգծված քաղաքականության իրականացման և եկամուտներն առավելապես հոգուտ հասարակության վերաբաշխման մասին: Երկրորդ խումբն առավել շատ վկայում է պետության ամրապնդմանն ուղղված քայլերի իրականացման մասին: Ըստ էության, նման տարանջատումը հնարավորություն է տալիս համեմատական վերլուծություններ իրականացնելու տարբեր երկրների միջև՝ պարզելու համար բյուջետային քաղաքականության գերակայությունները:

Տնտեսական գործընթացներին պետության միջամտությունը և տնտեսության պետական կարգավորումն առավել քան արդարացված են, քանի որ շուկայական տնտեսությանը բնորոշ որոշ խոցելի կողմեր, մասնավորապես, ոչ կատարյալ մրցակցությունը, հասարակական բարիքների արտադրության գործում շուկայական գործակալների շահագրգռվածության բացակայությունը և այլն, օբյեկտիվորեն պահանջում են տնտեսական գործընթացներին պետության որոշակի մասնակցություն և միջամտություն: Մակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պետության միջամտությունը պետք է լինի խիստ հիմնավորված և միայն այն դեպքերում, երբ շուկան ի վիճակի չէ ինքնուրույն լուծելու ծագած խնդիրները:

Ակնհայտ է, որ բյուջետային գործընթացի կատարելագործումը պետական ծախսերի արդյունավետության բարձրացման կարևոր գործիքներից մեկն է: Եթե բյուջեի պլանավորումը, կառավարումը և կատարումը անհրաժեշտ մակարդակի վրա չեն, ապա ծախսերի արդյունավետությանն ուղղված քայլերը, անշուշտ, չեն հանգեցնի սոցիալ-տնտեսական ցանկալի արդյունքների և հետևանքների: Բյուջետային գործընթացի կատարելագործումը պահանջում է փաստացի և ակնկալվող արդյունքների վերաբերյալ հստակ տեղեկատվություն, որը ենթադրում է համապատասխան բազայի, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման համակարգերի ձևավորում: Գոյություն ունեն մի քանի պատճառներ, որոնք խիստ կարևոր են պետական հատվածում գործունեության արդյունավետության գնահատման համար: Մասնավորապես, գնահատման արդյունքներն անհրաժեշտ են՝

- զարգացման գերակայությունների հստակեցման և բյուջետային գործընթացի տարբեր փուլերում համապատասխան որոշումների ընդունման,

- ծախսային ծրագրերի, ինչպես նաև ընթացիկ գործունեության գնահատման և առաջիկա ուղղությունների հստակեցման,
- կառավարության հաշվետվողականության և գործունեության թափանցիկության աստիճանի բարձրացման համար:

Շուկայական հարաբերություններին անցման ուղղությամբ ՀՀ-ում իրականացված տնտեսական վերափոխումները, ըստ էության, միտված էին տնտեսավարման նոր պայմաններին համահունչ և շուկայական սկզբունքների վրա հիմնված տնտեսության ձևավորմանը, որը, ի թիվս այլ խնդիրների, ենթադրում էր նաև նոր պահանջներից բխող բյուջետային համակարգի կառուցում և զարգացում: Այդ նպատակով ձևավորվեցին համապատասխան օրենսդրավական և ինստիտուցիոնալ հիմքեր, սահմանվեցին բյուջետային գործընթացի կազմակերպման և իրականացման ընդհանուր հայեցակարգային մոտեցումներ, և կատարվեցին համապատասխան քայլեր հանրապետությունում շուկայական հարաբերությունների պահանջները բավարարող բյուջետային համակարգի ձևավորման ուղղությամբ: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ հանրապետությունում բյուջետային ծախսերի կառավարման առումով դեռևս գոյություն ունեն մի շարք հիմնախնդիրներ, որոնցից անհրաժեշտ է հատկապես կարևորել հետևյալները.

1. Բյուջետային ծախսերի պլանավորումը հիմնականում իրականացվում է նախահաշվային մեթոդի հիման վրա, չնայած այն հանգամանքին, որ դրանց պլանավորման հիմքը պետք է լինի պետական և մունիցիպալ ծառայությունների մատուցումը: Ըստ էության, նախահաշվային մեթոդն առավել բնութագրական է պլանային տնտեսությանը, երբ մատուցվող ծառայությունների ծավալը և գները սահմանում է պետությունը: Տնտեսավարման ներկա համակարգի պայմաններում երբեմն այդ նորմատիվները կարող են բավարար չլինել բյուջետային հիմնարկի կողմից իր առջև դրված խնդիրների լուծման համար, և հաճախ բյուջետային հատկացումները կատարվում են՝ ելնելով առկա ֆինանսական հնարավորություններից: Ընդհանուր առմամբ, նման մեխանիզմի պայմաններում, երբ բյուջետային հատկացումները չեն փոխկապակցվում գործունեության ծրագրերի և դրանց արդյունքների հետ, հնարավորություններ են ստեղծվում բյուջետային միջոցներ հատկացնող սուբյեկտների համար սեփական հայեցողությամբ որոշումներ կայացնելու: Ավելին, որոշ դեպքերում նման մեխանիզմը կարող է ստեղծել սուբյեկտիվության մեծ դաշտ՝ բյուջետային միջոցներ հատկացնողների և ստացողների միջև ոչ ֆորմալ փոխհամաձայնության համար:

2. Բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատում և վերահսկողություն, որպես այդպիսին, չի իրականացվում, չնայած այն

հանգամանքին, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործումը հռչակված է որպես ՀՀ բյուջետային համակարգի հիմնական սկզբունքներից մեկը: Նշված օրենքով, բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության սկզբունքը դիտարկվում է երկու հիմնական տեսանկյունով. առաջին, որպես բյուջետային միջոցների նվազագույն ծավալի օգտագործմամբ նախատեսված արդյունքի ձեռքբերում, և երկրորդ՝ բյուջեով նախատեսված միջոցների ծավալով լավագույն արդյունքի ստացում: Միաժամանակ, բյուջետային համակարգի սկզբունքներ են սահմանվում բյուջետային միջոցների հասցեագրվածությունը և նպատակայնությունը: Համաձայն վերջիններիս՝ բյուջետային միջոցները հատկացվում են կոնկրետ ստացողներին՝ ֆինանսավորման հստակ նպատակների նշումով: Ընդ որում, բյուջետային միջոցների հատկացման ժամանակ օրենսդրության շրջանակներից դուրս ցանկացած գործողություն, որը հանգեցնում է բյուջեով նախատեսված միջոցների հասցեագրվածության խախտմանը կամ այդ միջոցների ուղղմանը բյուջեով չնախատեսված նպատակներին, որակվում է որպես օրենսդրության խախտում: Սակայն նշված սկզբունքների գործնական կիրառման տեսանկյունից գոյություն ունեն որոշակի դժվարություններ, հատկապես պայմանավորված արդյունավետության վերահսկողության իրականացման ինստիտուցիոնալ մեխանիզմների և հիմնավորված մեթոդաբանության բացակայությամբ: Ավելին, բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության գնահատման չափանիշների բացակայությունը, ըստ էության, էականորեն սահմանափակում է նման գնահատման հնարավորությունները՝ ապահովելով միայն որակական գնահատումների իրականացում: Մինչդեռ օրենքով բյուջետային միջոցների արդյունավետության գնահատման համար որպես չափանիշ է սահմանված լավագույն արդյունքը, որի գնահատման չափորոշիչները բացակայում են: Նման պայմաններում ակնկալվող արդյունքի ստացումը կարող է դրվել կախվածության մեջ առկա բյուջետային ռեսուրսներից: Այդպիսի մոտեցումը, մեր կարծիքով, չի կարող բնութագրել բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետության բուն էությունը: Այդ իսկ պատճառով բյուջետային ռեսուրսների պլանավորումը պետք է իրականացվի՝ ելնելով ակնկալվող արդյունքներից, այլ ոչ թե հակառակը:

3. Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին հանրապետությունում որոշակի քայլեր են իրականացվել ծրագրային բյուջետավորման համակարգին անցնելու և տարբեր գերատեսչությունների բյուջեները ծրագրային սկզբունքով կազմելու ուղղությամբ, այդուհանդերձ, դեռևս այդ ոլորտում գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ: Դա, նախ և

առաջ, պայմանավորված է բյուջեստավորման տվյալ մոդելի հիմնական բաղադրիչի՝ ակնկալվող արդյունքների բացակայությամբ: Այլ կերպ ասած, ներկայացվում են ձեռնարկվելիք քայլերն առաջիկա տարվա ընթացքում՝ առանց ներկայացնելու այն չափերի արդյունքները, որոնք ակնկալվում է ստանալ:

4. Հանրապետությունում բյուջեստային կարգապահության հասնելու համար վերահսկողությունն ուղղվում է բյուջեստային միջոցների նպատակային օգտագործմանը, և արդյունքում չեն ստեղծվում անհրաժեշտ խթաններ՝ դրանց արդյունավետության ապահովման համար: Համաձայն հանրապետությունում գործող մոտեցումների՝ բյուջեստային միջոցների ոչ արդյունավետ օգտագործումը, որպես կանոն, համարվում է դրանց ոչ նպատակային տեղաբաշխումը: Այս առումով ոչ նպատակային տեղաբաշխման համար օրենսդրությունը նախատեսում է որոշակի պատժամիջոցներ, մինչդեռ ոչ արդյունավետ օգտագործման համար նման մեխանիզմներ նախատեսված չեն:

5. Պաշտոնական և գերատեսչական վիճակագրության համակարգը ներկայումս չի պարունակում բյուջեստային միջոցների օգտագործման արդյունավետության գնահատման համար բավարար տեղեկատվություն: Ավելին, այդ մակարդակներում չեն գործում բյուջեստային եկամուտների և բյուջեստային ծախսերի մասին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև տեղեկատվության փոխանակման հստակ մեխանիզմներ, որը, ըստ էության, բացառում է արդյունավետ վերահսկողության որևէ տարբերակի իրականացում:

6. Բյուջեստային հիմնարկների գործունեության արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը, նախահաշվային պլանավորումը, բյուջեստային միջոցների նպատակային օգտագործման նկատմամբ կենտրոնացված վերահսկողության ուժեղացումը՝ հանգեցնում են բյուջեստային որոշումների ընդունման կենտրոնացմանը՝ վտանգելով բյուջեների կատարման թափանցիկության ապահովումը և սահմանված սկզբունքների պահպանումը, էականորեն նվազեցնելով ֆինանսական կառավարման ճկունությունը:

Ընդհանրացնելով ՀՀ բյուջեստային համակարգի կատարելագործմանն ուղղված բարեփոխումների արդյունքները և այդ բնագավառում առկա թերությունները՝ նշենք, որ դեռևս չի հաջողվել ձևավորել պետական ծախսերի կառավարման այնպիսի համակարգ, որը թույլ կտա կատարված բյուջեստային ծախսերը գնահատելու ըստ ստացված արդյունքների: Ծախսերի պլանավորումը հիմնականում իրականացվում է նախահաշվային մեթոդով, որն անհրաժեշտ փոխկապակցվածություն չի ապահովում ծախսերի և արդյունքների միջև: Բյուջեստային վերահսկողությունը

գլխավորապես ուղղված է ծախսերի նպատակայնության ապահովմանը. ըստ այդմ՝ գնահատվում է ոչ թե մատուցված բյուջետային ծառայության որակը, այլ ծախսերի նպատակային նշանակությունը: Հետևաբար, մեծանում է անորոշությունը, և ծագում են սուբյեկտիվ բնույթի բազում խնդիրներ, որոնք դառնում են լուրջ խոչընդոտ բյուջետային ծախսերի արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովման համար:

СОЦИАЛЬНО – ЭКОНОМИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ БЮДЖЕТНЫХ РАСХОДОВ И ВОПРОСЫ ПОВЫШЕНИЯ ИХ ЭФФЕКТИВНОСТИ

БОСТАНДЖЯН В. Б.

Резюме

Расходная политика, проводимая правительством РА, обусловлена возможностью определения степени оптимальности размера государственного сектора и уровня бюджетных расходов, способствующих решению возникших в стране социально-экономических проблем. Структурные особенности бюджетных расходов РА, показатели бюджетного дефицита, государственного долга и общие тенденции их изменения являются прямым следствием расходной политики.

THE SOCIO-ECONOMIC MEANING OF BUDGET EXPENDITURES AND PROBLEMS OF INCREASING THEIR EFFICIENCY

V. BOSTANJYAN

Abstract

The paper is devoted to the analysis of the expenditure policy implemented by the Armenian government over the last fifteen years in order to determine the current optimality of public sector and extent of contribution of the budgetary expenditures at solving state social and economic problems. Structural features of the budgetary expenditures of RA, the indicators of budget deficit, public debt and general trends of their changes, which are direct consequences of the expenditure policy are also discussed in this paper.